ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2014թ.փետրվարի 25-ին, թիվ 19-Ա
ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՐԴԵՆԻՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ -Ը ԶԱԼԻԲԵԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 124 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ԱՊԱՐԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ 19-ՐԴ ԿԵՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ԿԳ նախարարի 2014 թվականի փետրվարի 24-ի 01/07.01/ 1741-14 գրությունը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Վարդենիսի միջնակարգ դպրոց >>ՊՈԱԿ-ը անվանակոչել << Վարդենիսի Զալիբեկ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ:
2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 124 - Ա որոշմամբ հաստատված << Վարդենիսի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
<< Վարդենիսի միջնակարգ դպրոց>> բառերը փոխարինել << Վարդենիսի Զալիբեկ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց >> բառերով:
3.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի << Վարդենիսի Զալիբեկ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի կանոնադրությունը:
4.<< Վարդենիսի Զալիբեկ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենին՝ համապատասխան պետական ռեգիստրում իրականացնել << Վարդենիսի Զալիբեկ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի կանոնադրության պետական գրանցումը:
5.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ս. Պետրոսյանի վրա:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ